

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓՈՎԳԻՐ

«ՎՏԲ-Մանկություն» ֆիզիկական անձանց ժամկետային ավանդ

1. Ավանդի նկարագրություն, էական դրույթներ

- 1.1 Ավանդը ներդրվում է ռեզիդենտ կամ ոչ ռեզիդենտ ֆիզիկական անձի կողմից հօգուտ երրորդ անձի՝ անչափահասի (ավանդի ժամկետը լրանալու պահին մինչև 18 տարեկան):
- 1.2 Ավանդը կարող է համալրվել ցանկացած ժամանակ և ցանկացած չափով մինչև ավանդի ժամկետի ավարտին նախորդող 60-րդ օրը:
- 1.3 Ավանդը ներդրվում է ՀՀ դրամ, ԱՄՆ դոլար և եվրո արժույթներով:
- 1.4 Ավանդի ժամկետը որոշում է Ավանդ ներդրողը՝ 365 օրից մինչև 5475 օր (1-15 տարի):
- 1.5 Ավանդի ներդրման սկզբնական նվազագույն գումարը՝ 30 000 ՀՀ դրամ, 100 ԱՄՆ դոլար, 100 եվրո:
- 1.6 Ավանդի դիմաց տոկոսները վճարվում են յուրաքանչյուր տարի կամ ժամկետի ավարտին՝ տարեկան կապիտալացմամբ:
- 1.7 3 մլն. ՀՀ դրամ, 10 000 ԱՄՆ դոլար, 6 000 եվրո և ավելի ավանդների ներդրման կամ ավանդի գումարին կուտակումների արդյունքում հասնելու դեպքում՝ պայմանագիրը կնքելու պահին՝ տոկոսադրույքների գումարվում է (+)0.5% տարեկան տոկոսադրույք (կուտակման դեպքում ավելի բարձր տոկոսի հաշվեգրումն ավտոմատ կերպով իրականացվում է սույն կետով սահմանված գումարային սահմանի անցման հաջորդ օրվանից):
- 1.8 Ավանդի առավելագույն չափը սահմանվում է 50.0 մլն ՀՀ դրամ, 100 000 ԱՄՆ դոլար, 50 000 եվրո:
- 1.9 Ավանդը (համապատասխան տոկոսային եկամտի հետ միասին) վերադարձվում է պայմանագրով սահմանված ավանդի ժամկետի վերջին օրը, ավանդի գումարը փոխանցելով Բանկում Ավանդատուի անունով բացված ցպահանջ քարտային կամ այլ բանկային հաշվին, առանց կանխիկացման սակագրի կիրառման:
- 1.10 Բանկը Ավանդ ներդրողին կարող է տրամադրել VISA Int. վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագնային պայմաններով՝
 - բանկային քարտի թողարկում՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման վճար՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտային հաշվի չնվազող մնացորդ՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման բոլոր այլ սակագները՝ համաձայն Բանկում գործող սակագների:
 Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված՝ Բանկի համապատասխան որոշմամբ:
- 1.11 Ավանդային պայմանագիրը կարող է երկարաձգվել բազմակի անգամ՝ այդ ավանդի գծով տվյալ պահին գործող պայմաններով՝ մինչև 3-րդ անձի (երեխայի) չափահասության լրանալը:
- 1.12 Ավանդի ձևակերպումն իրականացվում է Ավանդատուի՝ իր և 3-րդ անձի՝ (երեխայի) անձը հաստատող փաստաթղթերի ներկայացմամբ:
- 1.13 Ավանդը պայմանագրով պայմանագրված ժամկետում չպահանջվելու դեպքում, այն ավտոմատ երկարաձգվում է նույն պայմաններով, իսկ տարեկան տոկոսադրույքը սահմանվում է երկարաձգման պահին տվյալ ավանդի համար Բանկում գործող տոկոսադրույքը:
- 1.14 Տվյալ ժամկետային ավանդի ներգրավումը Բանկում դադարեցված լինելու դեպքում, ավանդային պայմանագիրը երկարաձգվում է նույն արժույթով՝ բանկային (ցպահանջ) հաշվի համար տվյալ պահին բանկում սահմանված պայմաններով:
- 1.15 Պայմանագրի գործողության ընթացքում Բանկն իրավասու է միակողմանի փոփոխել պայմանագրում նախատեսված ավտոմատ երկարաձգման պայմանը, նախօրոք, այդ մասին, երկարաձգված ժամկետի ավարտից մեկ ամիս առաջ տեղյակ պահելով Ավանդատուին:

2. Տեղեկատվություն տոկոսադրույքների վերաբերյալ

- 2.1 «Տարեկան պարզ տոկոսադրույք» տարեկան կտրվածքով ավանդային պայմանագրով սահմանված տոկոսադրույք, որի հիման վրա բանկը հաշվարկում է ավանդատուին վճարման ենթակա տոկոսագումարները:
- 2.2 Ավանդի տարեկան պարզ տոկոսադրույքի չափ՝

Սկզբնական ներդրում/ժամկետ	Լողացող տոկոսադրույք (1-15 տարի)
ՀՀ դրամ 30 000 -ից	ՀՀ ԿԲ ՎՏ + 4.00% - (12.00%)
ԱՄՆ դոլար 100 -ից	Libor USD + 8.00% - (8,58%)
Եվրո 100 -ից	Libor EUR +5.00% - (6,27%)

- 2.3 Ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝ եթե ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տարեկան վերաֆինանսավորման տոկոսադրույքը հավասար է 8.0%-ի, ապա ՀՀ դրամով ավանդի տարեկան տոկոսադրույքը հավասար է 12.00%-ի, հաճախորդը մեկ տարվա դեպքում կստանա.
 - (100 000 ՀՀ դրամ) * 12.00% = 12000 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:
- 2.4 Ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը (APY)՝

«APY-էյ-Փի-Ուայ (այսուհետ՝ APY)»՝ տվյալ ավանդատեսակի համար հաշվարկված ավանդի տարեկան տոկոսային եկամտաբերությունը: APY ցույց է տալիս, թե որքան կկազմի ավանդի տարեկան եկամտաբերությունը հաճախորդի կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և ստացված տոկոսագումարները մայր գումարին ավելացնելու (կապիտալացման) արդյունքում:

APY – տարեկան տոկոսային եկամտաբերության տոկոսադրույքով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ՝ եթե ՀՀ ԿԲ-ի կողմից սահմանված տարեկան վերաֆինանսավորման տոկոսադրույքը հավասար է 8.50%-ի, ապա ՀՀ դրամով ավանդի տարեկան արդյունավետ տոկոսադրույքը հավասար է 12.0%.

- (100 000 ՀՀ դրամ) * 12.0% = 12 000 ՀՀ դրամ՝ 365 օրվա համար:

2.5 Ավանդը կարող է վերադարձվել ժամկետից շուտ: Ավանդատուի կողմից Ավանդը ժամկետից շուտ պահանջի դեպքում.

2.5.1 Եթե ավանդի փաստացի բանկում պահված օրերի քանակը փոքր է 365 /ներառյալ/ օրից Բանկը կատարում է տոկոսների վերահաշվարկ՝ տվյալ պահին Բանկում բանկային հաշվի համար սահմանված տարեկան տոկոսադրույքով:

2.5.2 Եթե ավանդի փաստացի բանկում պահված օրերի քանակը մեծ է 365 օրից՝ Բանկը կատարում է տոկոսների հաշվարկ պայմանագրով սահմանված տոկոսադրույքով:

2.5.3 «ՎՏԲ-Մանկություն» ավանդի պայմանագրի գործողության ընթացքում ՀՀ Կենտրոնական բանկի վերաֆինանսավորման և LIBOR-ի տոկոսադրույքի փոփոխման դեպքում, յուրաքանչյուր տարվա դեկտեմբեր ամսվա վերջին աշխատանքային օրը, Ավանդի տարեկան տոկոսադրույքը ավտոմատ սահմանվում է ՀՀ դրամով ավանդների դեպքում ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման/արտարժույթով ավանդների դեպքում LIBOR-ի նոր տոկոսադրույքին համապատասխան մակարդակի:

2.5.4 Սույն կետով նախատեսված տոկոսադրույքի փոփոխության վերաբերյալ բանկը պարտավորվում է գրավոր պատշաճ ծանուցել Ավանդատուին:

3. Տեղեկատվություն սակագների և տուժանքների մասին

- 3.1. Հաշվի քաղվածքների տրամադրման սակագներ.
 - ընթացիկ գործառնությունների վերաբերյալ՝ անվճար,
 - ըստ հաճախորդի պահանջի մինչև 1 տարի վաղեմության ժամկետով գործարքների վերաբերյալ՝ 1 000 ՀՀ դրամ,
 - ըստ հաճախորդի պահանջի 1 տարուց ավելի վաղեմության ժամկետով գործարքների վերաբերյալ՝ 2 000 ՀՀ դրամ,
 - ավանդատուների կամ նրանց ժառանգների գրավոր հարցումով ավանդային հաշիվների՝ 2 000 ՀՀ դրամ,
 - հաշվետիրոջ գրավոր հայտի հիման վրա քաղվածքի (կամ այլ փաստաթղթի), տեղեկանքի տրամադրում՝ էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ միջոցով՝ 550 ՀՀ դրամ + կապի վարձ:
- 3.2. Ավանդային հաշվի բացման, վարման և փակման ընթացքում տուժանքներ չեն կիրառվում:
- 3.3. Ավանդային հաշվի նվազագույն մնացորդ չպահպանելու դեպքում տուժանքներ չեն գանձվում:
- 3.4. Ավանդի գործողության ընթացքում Բանկը Ավանդատուին տրամադրում է VISA Int. վճարային համակարգի պլաստիկ քարտ հետևյալ սակագնային պայմաններով՝
 - բանկային քարտի թողարկում՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման տարեկան վճար քարտի գործողության առաջին տարում՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտային հաշվի չնվազող մնացորդ՝ 0 ՀՀ դրամ,
 - քարտի սպասարկման բոլոր այլ սակագները՝ համաձայն Բանկում գործող սակագների:
- 3.5. Քարտի տեսակը որոշվում է Ավանդի գումարից կախված՝
 - VISA Electron՝ մինչև 1 մլն ՀՀ դրամ (համարժեք արտարժույթով) ավանդի դեպքում,
 - VISA Classic՝ 1 մլն -6.999 մլն ՀՀ դրամ ներառյալ (համարժեք արտարժույթով) ավանդի դեպքում,
 - VISA Gold՝ 7.0 մլն ՀՀ դրամից (համարժեք արտարժույթ) և ավելի բարձր ավանդի դեպքում:

4. Վեճերի լուծման կարգը

Պայմանագրի գործողության ընթացքում կողմերի միջև ծագած վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնության չգալու դեպքում վեճը լուծվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: Ավանդատուն հնարավորություն ունի Բանկի և իր միջև սույն պայմանագրից բխող բոլոր պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարին:

5. Ավանդը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝



Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 2 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	4 միլիոն ՀՀ դրամ	2 միլիոն ՀՀ դրամ	2 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը 2 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)	2 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը 2 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով)	4 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
* Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:					

6. «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ հաճախորդին հաշվեգրված տոկոսները վճարելիս Բանկը հանդես է գալիս որպես ավանդատուի հարկային գործակալ, գանձում է եկամտահարկ տոկոսագումարի (եկամտի) 10%-ի չափով և փոխանցում պետական բյուջե: